

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԵԼԵՔՐԱՆ Խ 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

ՏԵԼԵՔՐԱՆ Խ 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՈՒՄ Ե՛ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՅ 1897 ԹԻՎԱԿԱՆԻ

25-ՐԴ ՏԱՐԻ

25-ՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղու-
թեամբ: Մենք ստանում ենք սեփական հեռագիրներն:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և
մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսա-
կանը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ԽՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԱՆԻ (Բաղադրանքային և Բարձրագույն փողոցների մակերև):
Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal armenien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով.
բառին վճարվում է 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սուվորին և Մեշչերսկի սենատորների գերում.
Հայտու թիւն. Հայ փախստականները Ֆրանսիա-
յում.—ՆԵՒԻԹԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գանձա-
կից. Նամակ Լուսուց. Նամակ Խմբագրութեան.
Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Վերջին տեղեկութիւններ. Կրեմլի կառավարի-
չը.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՆԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՍՈՒՎՈՐԻՆ ԵՒ ՄԵՇՉԵՐՍԿԻ ՍԵՆԱՏՈՐՆԵՐԻ ԴԵՐՈՒՄ

«Կովկասեան գործերը» վերնագրով յո-
ղաւոր, որ մենք արտատպելիքը «Մշակի»
անցնել համարում, պարզ ապացոյց է,
ինչքան էլ այդ գործնալի չը լինի, որ
խմբագիրներ Սուվորին և Մեշչերսկի,
չը բաւականապէս խմբագրական տիրու-
թեան, ձգտում են հազնել սենատորական
ծիրանի, և հետո Պետերբուրգում նստած,
հրահանգներ տալ Թիֆլիսի դատաստանա-
կան քննիչներին և մինչև իսկ Թիֆլիսի
նահանգական զինւորական դատարանին:

Այդ ծայրահեղ համարձակութեամբ
զինված յետագէտ բանակի երկուեայ ներ-
կայացուցիչները ասում են. «Նոյեմբերի
28-ին քննիչի գործը, որի մէջ Ամինով և
Կարախանով մեղադրվում են վաճառական-
ներ Գեորգովի, Մակարովի, Աբովեանցի և
Սիւրախանեանցի դէմ սպանութեան փորձ
անելու համար, փող դուրս կորզելու նը-
պատակով—շնտաւած, քրեական սովորա-
կան յանցանք չէ, այլ քաղաքական-հայկա-
կան կոմիտեաների ագէնտների գործ, և
ուրեմն զրա վրա դատարանը պէտք է նա-
յի ոչ թէ իբրև լոկ քրեական, այլ իբրև
անպարտական-քաղաքական գործի վրա»:
Եւ այդ հարցի մէջ էլ, անբարեխիղճ գորդ-
ների մշտական սովորութեամբ, ընդհանուր
պետութեան, ամբողջ Ռուսաստանի շահե-
քը շոշափված տեսնելով՝ մեր պոլիցիստ-
ները ձգտում են, հազարաւոր վերստերից,
ուղարկական խօսքի միջոցով ճշնում գործ
դնել և ազդել դատարանի արամադրու-
թեան, ուրեմն և դատաստանական վճիռ
վրա...

Մենք շատ անգամ առիթ ենք ունեցել
Սուվորինի և Մեշչերսկու օրգաններ-
ի մէջ ահազին իրաւագիտական դատո-
ղութիւնների կարգալ դատարանի ան-
կախութեան, դատաստանական ան-
քննութեան ան աշխուժութեան մա-
սին, որ իւրաքանչիւր դատավարութեան
առաջին և անհրաժեշտ պայմանն է, և
չենք հասկանում թէ մարդ ինչքան պէտք
է կուրացած լինի և նախապաշարված, որ

չը լինէր, այլ հայ, պէտք է գոռային՝
«Ահա յեղափոխականների յանդիմութեան
նոր ապացոյցներ, ահա նոր փաստ, որ
հայերը ձեռք են բարձրացնում նոյն իսկ
ռուսի, մինչև իսկ ռուս պաշտօնեայի վրա»,
աւելացնելով, թէ դատարանը պէտք է դրանց
վրա նայէ, ոչ իբրև քրեական-սովորական
յանցաւորների, այլ քաղաքական ագէնտ-
ների վրա: Բայց այդ ո՞ր կերթար...

Կատարեալ քաղաքականութիւն է, ճշմա-
րիտ, խեղճ հայերի համար, որ Ամինովի
և Կարախանովի զոհերը հայեր էին, ա-
յա թէ ոչ, եթէ Գեորգովի կամ Սիւրախա-
նեանցի փոխարէն մի ռուս լինէր կամ մի
այլազգի, մեր հասարակութիւնը փրկու-
թիւն չէր ունենայ հայատեաց պոլիցի-
ստների ձեռքից: Ասում ենք կատարեալ
քաղաքականութիւն է, որովհետեւ երբ մի
խմբագիր, մի օրգան հասնում են այն աս-
տիճանի ինքնամոռացութեան և համար-
ձակութեան, որ իրանց վրա զցնելով սենա-
տորների ծիրանի սխուռն են ճշնում
գործ դնել նոյն իսկ դատարանի վրա,
չեն հաւատում մինչև իսկ ռուսներից
քաղաքացի զինւորական դատարանին, այն
ժամանակ այլ ևս ոչ մի հերքում, ոչ մի
փաստ, և ոչ էլ ամենախիստ լոգիկան
անկարող են որ և է ազդեցութիւն գործել:

ՀԱՅՏՈՒԹԻՒՆ

Խալիլան, վերջապէս, հաշտվեց հաբէշների
հետ: Պայմանները, ինչ տակ կուզի, Նիւթիլայի
օգտին են, որովհետեւ նա է յաղթողը: Եւ իտա-
լական մեծամիտ արեւմտահայերէնը ամօթա-
հար ու խղճագած՝ վերադառնում է Աֆրիկայի
ափերից: Տանը, իտալայում, նրան դիմաւո-
րողներն են հաղարարու մայրեր, որոնք ողբում
են հաբէշական զնդանքներն զոհված իրանց օր-
դիններին: Ո՞վ պիտի միջնորդէ այդ մայրերին:
Ոչ ոք. որովհետեւ ոչ ոք չէ կարող ասել թէ
այդքան զոհեր հարկաւոր էին: Մայրերի ար-
տասունքը արհամարհում է XIX դարի Եւրոպան:
Հարկաւոր չեն մայրեր, հարկաւոր են տանեակ
հազար անմեղներ, որոնց առանց խղճի խալիլո-
ցի ուղարկում են սպանութեան: Զին Մորգը մի
անմեղութիւն է այժմեան շակած կուռքի մօտ,
որին ծունր է դնում անունով միայն քրիստո-
նեայ համարվող մարդը:

Խալիլան ուրախ է, որ գտնէ առ այժմ դա-
դարեց ֆրիկեան արեւմտահայերէնը: Նրանից
աւել Հաբէշաստան է ուրախ: Եւ իւրաքանչիւր
մարդ, որ ապրում է աշխարհի դանաղան ան-
կիւններում, չէ կարող գո՛չ չը լինել տանեկով
իր նմանին ոչ թէ մի անմիտ կոտորածի փոխ-
րիկների մէջ, այլ նստած իր տանը, իր ընտա-
նիքի և սիրելիների շրջանում: Բայց վաղը, միւս
օրը կը շարունակվի այդ խաղաղութիւնը, թէ
ուրիշ կերպ կը մտածեն իշխանութիւնն ունե-
ցողները, նրանք, որոնք հնարել են ամբոխի
համար հեղափոխական անուն—«մի» թնդանութիւնի
համար: Գուցէ արեւմտահեղ դրաման վերջացել
է ժամանակաւորապէս, գուցէ նա դադար է մի-
այն և յարմար միջոցին նորից տանեակ հաղար
զոհեր պիտի գնան իրանց արեւը թափելու:

Այդ չը գիտենք: Գիտենք միայն, որ եթէ Գա-
րիբաշի հարկները ամբողջ աշխարհի համա-
կրթութիւնն էր վայելում, դա միայն այն պատ-
ճառով էր, որ Գարիբաշի խալիլան մարմնաց-
նում էր մի քաղաքական շարժում, որ բար-
ձրանում էր բռնակալութեան երկաթէ ոտների
տակից և միայն մի ազդակ ունէր—ազատու-
թիւն: Բայց երբ նոյն խալիլան, դաւանանք
ընդունելով իր դաշնակից Գարիբաշի արեւ-
ուսու քաղաքականութիւնը, մտածում է անի-
րաւութեան լոգիկայով կանել նոյն իսկ մի
վայրենի աղք, որ ազատ է իր պապերի հողի

վրա, որ ոչ ոքին չէ տուել, այդ ժամանակ
նա դառնում է Բիսմարկեան չարագործութիւն-
ների աշակերտ, այսինքն գիշատիչ, ամբողջ ինս-
տիտանների ներկայացուցիչ:

Հարց է. ինչ դրոււմ տարաւ Նիւթիլայի այն
խեղճ, ծուլ և հարկերի ծանրութեան տակ հընչ-
ված իտալացիներին, որոնք դեռ չեն մոռացել
իրանց սարկաթեան օրերը, որոնք երէկ, ան-
ցեալ օրը Մաձիթիների զաղափարներն էին ծը-
ծում և ազդում էին, որ բոլոր ստրուկ աղգե-
րը ազատվեն ու իտալիան էլ դրանցից մէկը
դառնայ: Ի՞նչ էր, պատճառը: Փայլուն սովորների
հրամանատարները ձեռք իսկոյն կը պատասխա-
նեն.—Եւրոպական քաղաքակրթութիւնը հաբէշնե-
րի մէջ տարածելու համար: Այս երգը արդէն
չառ է հնացել և դարձել է հաղար աղից ծա-
կոտած պատրուակ, որի տակ այլ ևս չէ կարո-
ղանում թաղել իսկական գաղանը—քաղաքա-
կրթված մարդկերութիւն: Եւրոպական քաղա-
քակրթութիւնը անգամ, տանջվում է կոտ դիմ-
աւորի ձեռքում, որ դարերից ի վեր գիտէ միայն
արեւն թափելու, ստրկացնելու արհեստը: Դա
պէտք է մտնէր ֆրիկեան երկրի տակի Գա-
ղաքական Եւրոպան ձրի քաղաքակրթութիւն չէ
տալիս. նա միսիօնար չէ, այլ անհոգի սաղա-
ւարտ, որ հաշում է, չափում և քաղաքակրթու-
թեան հասկացողութեան մէջ արեւում ընդգը-
ծում է՝ տմարդութիւնն սև փական չահի
համար: Այնպէս որ հանրամարդկային բարոյա-
գիտութիւնը չուրած կանգ է առնում: Ահա քա-
ղաքակրթութիւնը, Բիսմարկ, որի «հաւատամքն»
են կրուպիլ թնդանութիւնը, քաղաքական խաղ-
քակրթութիւնը, ստոր ու անամօթ լաւբեղայու-
թիւններ և անյատակ առեւտրի զէպի այն
ամենը, ինչ ապրում է ուրիշ երկրի տակ: Եւ
ակամայ հարց է ծագում. ո՞րն է լուս. այդ տե-
սակ քաղաքակրթութիւնը, որ առանց ստրկաց-
նելու, առանց հարստահարելու մատը մատին չի
խալի, թէ այն հին, աւեր հասկացողութիւնը, որ
զոհախոտաբար, խեղճ ու թույլ աղբերի մէջ է
մնացել և սովորեցնում է թէ մարդակերութիւնը
վատ է: Հաբէշաստանի մի բուն ժողովուրդ տա-
քի տակ արդեց քաղաքակրթ լիւրօպայի մար-
դակերութիւնը. նա իր մութ ու տգէտ խելքով
դառ տուեց, յաղթանակ տանելով նոյն այն զէն-
քով, որ կատարեալագործել էր Եւրոպացին՝ իր
հարստահարող ինստիտաններին ծառայեցնելու
համար:

Խալիլայի և Հաբէշաստանի մէջ հայտնութիւն
կնքվեց: Բայց դա ինչ է: Մի կատարեալ ամօթ
սպառազինված քաղաքակրթութեան համար:
Վիլնիւմ կայսրը Վերմանի հորհարութիւններ
ուղարկեց իտալիա, միթէ զարձեալ ամօթահար-
ներին խրախուսելու համար, ինչպէս այն պատ-
կերը, որ գնաց հաճութիւն յայտնելու սովորան
Համբի:

ՀԱՅ ՓԱՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Հայր Եւրոպեան հետեալ յօդուածն է հրա-
տարակել «Oeuvres des écoles d'Orient» հանդէ-
սի մէջ.

«Կ. Պոլիսը, վերջին կոտորածներից առաջ,
որոնք արեւմտ Ներկի են այդ մայրաքաղաքը,
300.000-ից աւելի հայ բնակիչ ունէր: Այսօր,
մի քանի չաբաթում այդ թիւ մի քառորդը ան-
հետացել է: Թէ կոտորածից և թէ բանտից ա-
զատվելու համար այդ թշուառները խմբով
զաղթում են զէպի ամեն կողմ—Բաղդադ, Ռու-
սաստան, Յունաստան, Կիպրոս, Եգիպտոս, Ամե-
րիկա, Ֆրանսիա և այլն: Մի քանի օր առաջ
մենք գնացել էինք Մարաշը նպատակ հազար
բաժանելու այդ քաղաքը եկած մօտ 600 զաղ-
թականներին: Մենք տիրութեամբ համակցեցինք
տեսնելով այդ երիտասարդների քաջած ծայրա-
հեղ թշուառութիւնը և այն ստիկեկան համբե-

բուժիչները, որով նրանք տանում էին այդ թը-
շուստութիւնը:

«Բայց մեզ ամենից շատ վշտացնողն եղաւ այն,
որ ոչ մի ֆրանսիական նպաստիչ մասնաժողով
չէր ընդունել այդ թշուստ հաշվածներին, երբ
նրանք մտել էին քաղաքը: Միայն փրկութեան
Ձօրքը և մի անգլիական մասնաժողով հետա-
քըքրվել են նրանցով և նրանց առաջին հոգա-
ցողութիւնն եղել է միջոցներ հայթայթել նրանց
Ամերիկա գնալու համար:

«Որքան ցաւալի է, որ ֆրանսիական վարչու-
թիւնը չէ ըմբռնել այն օգուտը, որ կարող է
քաղել այդ գաղթականներից, մեր գաղութների
համար, որտեղ աշխատող ձեռքի պակասութիւն
կայ, ուղղելով այդ գաղթականներին, որոնք կա-
րող են այսուհետև հաղթանքներ գալ, դէպի Թու-
նիս, Ալժիր, Մադագասկար և Տոնկին:

«Եւ ինչու չը յանգործել մի այդպիսի ոյժ,
որ ինքն իրան մեր արամադրութեան տակ է
դնում և որը ուրիշները խլում են մեր ձեռքից
նոյն իսկ ֆրանսիական նաւահանդիսներում:

«Հայը, արդարև, աշխատող է, բանիմաց, հա-
մեստ, պարկեշտ, դիմացող և մանաւանդ վերին
ատիճանի սակաւագետ: Նա բաւականաւոր է
քիչ վարձատրութեամբ, հաւատարմ է իր տէ-
րերին, և չուտով յարկաւորում է կեանքի ամեն
եղանակներին, բոլոր պայաժօններին, թէև նրա
հագուստները աւելի հողագործութեան կողմն են:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Նոյեմբերի 17-ին

Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Գանձակ գա-
ւիս են գաղթականներ, որոնց դրութիւնը վերին
ատիճանի ցաւալի տպաւորութիւն է թողնում
նայողի վրա. մերկ, պատառոտած չորերով,
քաղցած. գաղթականներին տեղաւորել են տղա-
յոց դպրոցի սենեակներում: Գաղթականներ
թիւը հասնում է 32-ի: Բացի հայերից դրանց
մէջ կան նոյնպէս ասորիներ և ղպտիներ: Հա-
սարակութիւնը անխտիր օգնութիւն է մատա-
կարարում բոլորին:

Հաղարծինի վանքի վանահայր Պօղոս վարդա-
պետի մահը շատ ցաւալի տպաւորութիւն թո-
ղեց գանձակցիներին վրա: Անցեալ կիրակի ս.
Յովհաննէս մայր եկեղեցում հանդիսաւոր պա-
տարագ և հոգեհանգիստ եղաւ նրա յիշատակին.
եկեղեցում ժողովրդի մեծ բազմութիւն կար՝
հայր Թաւադապեանցի տկարութեան պատճառով
քարոզ խօսեց Տաթևի յաջորդ Գրիգորիս վար-
դապետը, յիշելով մի առ մի հանդուցեալի կա-
տարած գործերը. հանդուցեալի յիշատակին եղ-
բայրներ Նաբաթեանցիների ամեն այդ օրը «հոգ-
ւոյ ճաչ» արվեց:

Այսօր հողին յանձնեցին Օղեսայի համալա-
րանի իրաւաբանական բաժնի 4-դ լսարանի ու-
սանող՝ գանձակցի կարապետ Հայրապետեան-
ցին: Հաղիւ մի քանի ամիս էր մնացել մինչև
որ բարձրագոյն ուսումը վերջացնէր, բայց երի-
տասարդը վարակւում է թորքախտով և համա-
լսարանի վարչութեան թոյլտուութեամբ արձա-
կուրդով վերադառնում է իր հայրենի քաղաքը՝
կաղզուրդիւրու համար, բայց, ժգրախտաբար, մօտ
3 տարի տանջվելով այդ ծանր ախտից, այսօր,
ի մեծ ցաւ բոլոր գանձակցիներին, վախճանվեց
26 տարեկան ծաղիկ հասակում: Յուդարկաւոր-
ների մեծ բազմութիւն էր եկել եկեղեցի: Հան-
դուցեալը մի հատիկ զաւակն էր իր ծնողների:

ՆԱՄԱԿ ԼՈՒՈՒՑ

Նոյեմբերի 12-ին

Անցեալ անգամ յայտնեցինք, որ Մարց գիւ-
ղում մի կին սպանել է տուել իր մարդուն:
Մանրամասնութիւնը հետեւեալն է: Պատմում են,
որ մարդը ամուսնութեան հէնց առաջին օրերից՝
անընդունակ է հանդիսանում ամուսնական
կեանքի համար, և այդ պատճառով կինը մի
ժամանակից յետոյ յայտնում է իր ծնողներին,
որպէս զի պակշտ լուծել տան և նոյն իսկ մի քանի
անգամ փախչում է ծնողների մօտ՝ բայց նրանք
ոչ միայն չեն լսում իրանց զաւակի լնդիքը,
այլ և խորհուրդ են տալիս մնալ մարդու մօտ:
Վերջապէս դործը հասնում է ծխախոտ բաժանա-
լին: Բարեկ կ'ը օճ բաժանան հետեւելով ս. զրքի
խօսքին—«Արդ, զոր Աստուած զուգեաց, մարդ մի

մեկնեացէ՛ք՝ նախապետական սովորութեամբ, մի
քանի անգամ փետում է կնոջ մազերը և
հրամայում հնազանդվել իր ճակատագրին: Ահա
մարդկանցից յոյսը կտրած, իրան տալիս է ան-
հաւատարմութեան... որի հետեանքը լինում է
հասա այս ոճրագործութիւնը: Գործը դեռ ևս
ճիշդ քննված չէ: Ենթադրում են, որ ոճրագոր-
ծը կնոջ սիրեկանն է: Այսպիսի դոճեր շատ կը
պատահեն, եթէ մեր հողեօրակցանութիւնը ա-
մուսնական խնդիրները չը լուծէ և մի որոշ
կարգի տակ չը դնի:

Նոյեմբերի 2-ին Լուսն անտառապետութեան
Շահալի անտառամասում մեծ հրդեհ պատահեց,
որ տեւեց 3 օր: Տեղական անտառապետը հեռա-
գրեց կառավարութեան: Հանգցնելու համար
շատ աշխատեց տեղական պօլիցիան: Համարեա
թէ ամեն զիւղից էլ մարդ դուրս բերեցին, սա-
կայն հրդեհը մեծ էր և դժուարաբանում էին
հանգցնել: Բարեբաղդաբար, չորրորդ օրն անձրև
եկաւ և այդպիսով միայն հրդեհը հանգաւ: Ա-
սում են, որ տեղ-տեղ մեծ վնաս է տուել:

Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարս, նոյեմբերի 13-ին

«Արձագանքի» 127-րդ համարում տպագրված
է մի թղթակցութիւն ինձ դէմ, որ յօդուածա-
գիրը առաջ բերելով Բարեգործական ընկերու-
թեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովում իմ
խօսած ճառի բովանդակութիւնը, գտնում է նը-
րան զգուշ և արդիւնք անձնական հայրենիքի,
և ուղղում է իմ հասցէին մի շարք մեղադրանք-
ներ՝ զանազան անակաւանդելով զարգացած: Նա
խոստովանում է մի և նոյն ժամանակ, որ այդ
անում է ինձ և իր բարեկամի դէմ, ճշմարտու-
թիւնը բարեկամութիւնից վեր դասելով:

Այդ՝ ճշմարտութիւնը բարեկամութիւնից ա-
ւելի միտող պարոնին ստիպված եմ ասել, որ
նրա թղթակցութիւնը բացարձակ ստույգ է
սկզբից մինչև վերջ: Եթէ ես համոզված եմ, որ
«Արձագանքը» անբարոյականացնող աղբեղութիւն
ունի ընթերցողներին վրա, եթէ ես իմ ճառը
գուցէ և հէնց այն երկրակցութեանը վերջաց-
նէի, որ առաջարկէի զբաղարանում չը ստանալ
«Արձագանքը», կրկնում եմ, եթէ ես այդ հա-
մոզմունքը ունենայի էլ, քանի որ ես այդպիսի
մի առաջարկութիւն չեմ արել ժողովում, ճշ-
մարտախօս թղթակցից իրաւունք չունէր իր
երևակացած խօսքերը իմ բերանում դնելուց յե-
տոյ, դեռ մի ամբողջ շարք մեղադրանքներ
ինձ վրա բարձել: Այդպիսի մի վարմունք առ-
նուաղը անաղնութիւն է, որը երբեք պատիւ
չէ բերում մի թղթակցի, որը թոյլ է տալիս ի-
րան ասելու, թէ ճշմարտութիւնը վեր է դասում
ամեն բանից:

Յօդուածի այդ ոճով և այդ ճշմարտախօսու-
թեամբ գրված լինելը մի նորութիւն չէր: Զար-
մանալի կը լինէր, եթէ ուրիշ կերպ լինէր, քա-
նի որ նա տպված էր «Արձագանքի» մէջ, և իր
տակ կրում էր մի անուն, որն իր այդպիսի
ճշմարտութիւնների համար երկի վնասված է ե-
ղել թէ «Մշակի» էջերից և թէ կարծեմ նոյն
իսկ... Ես չէի պատասխանի այդ յօդուածին,
բայց որովհետև այդ թղթակցութիւնն էլ մէկն
էր այն թղթակցութիւններից, որոնք, յայտնի
նպատակով, գնում են կարսից, և որոնք որքան
էլ անստորադիր լինէին, այնու ամենայնիւ, գրո-
ղի հոգին և ակնաչնդներն են ցոյց տալիս ամեն
մի տողից, ուստի ես ուղեցի մասնաբաժնից ա-
նել, որ եթէ մի թղթակցի անունը ստորա-
գրելիս անգամ ընդունակ է օրը ցերեկով կա-
տարված իրողութեան համար այդպիսի մի սուտ
գրել, ինչ չի գրի նա, երբ յօդուածը չէ ստո-
րագրում և անձնական հայրենիք ունի իր հակա-
ռակորդի հետ:

Ինչ վերաբերում է թղթակցի քաջանայու-
թեան հարցին, որի զարթեցնողը նա ինձ է հա-
մարում, հարկաւոր եմ համարում ասել, որ այդ
հարցը եթէ մեռաւ, դրա մէջ մեղաւորը ես չեմ:
Միակնան ժողովի ժամանակ, երբ ձեր անունը
որպէս ընտրելի յայտնեցին, պ. Տէր-Մէլքիսե-
ղեկեան, ժողովականները պիտոյցին՝ «Նչ, ոչ,
չեմք ուղղում: Այդ օրից, երբ մերժվեց ձեր
խնդրիքը, դուք սկսեցիք մի ամբողջ հալածանք
այն անձնաւորութեան դէմ, որը պատճառ դար-
ձաւ իմ գլխին պահպանել» կարդալու ձեր
փախաղը ձեր սրտում թողնելու: Ես զգում

եմ նոյնպէս, թէ ինչ մտքով էք այդ հար-
ցը ևս մէջ բերել ձեր թղթակցութեան մէջ.
երեկ ասելու, թէ տեսէ՛ք՝ ահա «մշակականը»,
որ նոյն իսկ ինձ պէս՝ հակառակ կուսակցու-
թեան մարդուն քաջանայ է առաջարկում: Սա-
կայն դուք դրանով հաստատում էք, որ ես նեղ
կուսակցական մարդ չեմ: Ես ուղղում եմ հա-
ւատալ, որ մէկը կարող է լինել ուրիշ կուսակ-
ցութեան, ուրիշ համոզմունքի տէր մարդ, բայց
անկեղծ և ազնիւ: Սակայն կարծես դուք ուղե-
ցիք հաստատել մի անգամ ես, որ դուք կաղ-
մում էք մի դասակարգ, որը անձնական ատե-
լութեանը կարող է դոճել ամեն մի սուրբ բան
և ուրանալ ամեն մի լաւ գործ, ինչ որ անում է
միւս կուսակցութեան պատկանողը:

Աբէլ Ապրիսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, նոյեմբերի 18-ին

Թէև ոչ Բագուի, ոչ էլ Շամախու բնակիչ ենք,
սակայն աւելորդ չենք համարում մի քանի խօսք
ասել յարուցված և այժմ յիշեալ երկու քաղաք-
ներում էլ մտքեր դադարեցնող հարցի մասին,
մանաւանդ որ «Մշակի» էջերում արդէն դրա
մասին սկսվել է մտքերի փոխանակութիւն:
Նախ ասենք, որ մենք հակված ենք զարոյցը
Շամախում բացվելու մտքին և միանգամայն հա-
կառակ—Բագուում բացվելուն: Ինչու:

Առաջինը և ամենազիւստորը—Բագուն մի
կղզիացած քաղաք է, ամբողջովին կլանված կա-
պիտալիզմով չբնակալւում չունի գիւղեր և ա-
ւաններ, մինչդեռ Շամախին, ընդհակառակը, մի
կենտրոն է, չբնակալւում բաւականաչափ գիւ-
ղերով: Երկրորդ. Բագուում բաւական շատ
կրթական հիմնարկութիւններ կան, որոնց թիւը
տարուց տարի աւելանում է և, հետեալպէս, հա-
րաւորութիւն է արվում ազգաբնակչութեանը տը-
նորին: Իր զաւակների կրթութեան գործը,
մինչդեռ Շամախին իր չբնակալւում միանգամայն
դուրկ է այդ բարեքնիքից: Բացի դրանից՝ Բագուի
հայ ազգաբնակչութեան մեծ մասը կենտրոնա-
ցած է Սև քիւղաւան և Բալախանում, որտեղ
կրթական հիմնարկութիւններ չը կան և, հետե-
ւապէս, իրանց զաւակներին ուսման տալը Բագ-
ուում նոյն ծախսը կը նստի, ինչ որ մի օր և է
ուրիշ հեռավոր տեղ, զիցուք Շամախում, եթէ
միայն ցանկութիւն ունենան զաւակներին թե-
մական դպրանոց տալ: Իսկ որ ամենահիմնաւորն
է, Բագուում և իր կօթիւններում ապրող հայերը
(ինչպէս և իւրաները) իրանց որդեկրանց կաշ-
խատն աւելի չաւա զինատիւա, լեզուական դըպ-
րոց (ինժեներ և կառավարիչների հարց կայ),
արհեստաւորաց, տեխնիքական, քաղաքային (ար-
հեստաւորների, մեքանապարծների հարց կայ)
տալ և միայն անաղնութեան դէպքում, կը
փորձեն ակամայից թեմական դպրանոց տալ,
որ յետոյ միւս տարի հանեն և յիշեալ դպրոց-
ներից մէկում տեղաւորեն: Մինչդեռ Շամախին
և իր չբնակալւում, ձգտելով զաւակներին կրթու-
թիւն, ուսում տալ, ուրախութեամբ կը լցնեն
թեմական դպրոցը ուսումնաձայաւ մանուկնե-
րով: Դեռ թողնեմք այն, որ մի բուռն ինտե-
լիգենտ ոյժ, յանձնի ուսուցչական խմբի, Շամա-
խում պէս գաւառում մի լուսաւոր լապտեր կը
ներկայանայ, մինչդեռ Բագուում դրանք համա-
րեա թէ անյայտութեան մէջ կը կորչեն, որով-
հետև այստեղի կեանքին ուղղութիւն տուող ոչ
էլ ինտելիգենտ, զարգացած երիտասարդութիւն
է, այլ նախ, մաքուր և մաքուր և դրա նման շատ բա-
ներ...

Այս էլ պիտի ի նկատի ունենալ, որ չամա-
խեցիներէ կամ չբնակայ գիւղացիներից մէկի
համար իր որդուն Բագուի թեմական դպրոց
տալը կը նստի առնուաղը 200—250 ռ. իսկ
քանի հողի խեղճ և աղքատ գիւղացիներից կը
կարողանան այդքան տալ... Հօ բոլորը որդե-
գիր չեն կարող լինել:

Ասողներ կան, որ զարոյցը Շամախում լինե-
լով, նիւթականապէս միշտ կը կաղի, որովհետև
հարուստները չեն օգնի և ինտրիգներ ու խոռ-
վութիւնների բուռն կը լինի, ինչպէս Շուշում և
այլն: Դրան մենք կասեցնք, որ ինտրիգների ու
խոռվութիւնների պատճառ միշտ եղել է հա-
գետ իշխանութիւնը, որը հանգէս է գալիս ինչ-
պէս փողովորի իրաւունքները բռնադատող և ա-
ւելի հետեանքների պատճառ դառնող մի երե-
ւոյթ, որը ամեն քաղաքում էլ կարող է տեղի

ունենալ, լինի դա Բագուն, Շամախին թէ Աստ-
րախանը—մի և նոյն է: Գալով նիւթականին, մենք
այս կասենք, որ թէև մասամբ իրաւացի է այդ
առարկութիւնը, սակայն մի և նոյն ժամանակ
դժուար է կատարելապէս համաձայնվել, որովհետև
կարծում ենք, որ մեր հարուստ բարեգործները
մի բան անում են գիտակցաբար, այլ ոչ ի
ցոյց մարդկանց: Եթէ նրանք հաւատացած են,
որ իրանց այդ առատ նուիրատուութեամբ մի բա-
ղի գործ են կատարում, և համոզված են դրա
օգտակարութեան մէջ, նրանց համար մի և նոյն
է Բագուի համար տան այդ փողը, թէ Շամախու
կամ մի այլ տեղի համար: Գալով այն հարցին,
թէ լաւ ոյժեր չեն համաձայնվի գնալ Շամախի
ուսուցչութեան—մենք միանգամայն հակառակ
ենք. դա էլ ուրիշ հանգամանքներից է կախված:
Տուէք ուսուցչին ազատութիւն, նիւթական ապա-
հովութիւն, հանգիստ թողէք նրանց, նրանք ու-
րախութեամբ ոչ թէ Շուշի և Շամախի կը դը-
նան, այլ և ամեն մի յետ ընկած գիւղ: Իսկ ե-
թէ Շուշու նման «օյրնաբաղութիւններ» կանեն,
ոչ թէ որ և է համալսարանական, այլ ծխական
դպրոցում աւարտածն էլ չի գնայ:

Ռ. Յովհաննեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, նոյեմբերի 14-ին

Նոյեմբերի 10-ին, կիրակի օր, սիրողների
խումբը, յօգուտ Բարեգործական ընկերութեան
տեղական վարչութեան, ներկայացրեց «Ռու-
զան» դրաման. և որովհետև այդ ներկայացման
կարգադրութիւնը և հաշիւը իմ ձեռքումն էր,
այդ պատճառով էլ պարտք եմ համարում հրա-
պարակով հաշիւ ներկայացնել:

Երևանի հասարակութիւնը այնքան սիրով վե-
րաբերվեց այդ ներկայացմանը որ, չը նայելով
Ֆելեկեան քոյրերի դատապարտելի վարմունքին,
որ չը համաձայնվեցին մի բարեգործական ներ-
կայացման մասնակցել և իրանց վերջին ներ-
կայացումն էլ նշանակեցին ընկերութեան ներ-
կայացման օրերը,—տոմսակիները մի շարքով
առաջ արդէն վաճառված էին, այնպէս որ շա-
տերի համար ստիպված էինք աւելորդ ախոռ-
ներ դնել, իսկ մօտ 30 հոգու էլ մերժել տեղ և
տոմսակ չը լինելու պատճառով: Այդ ուրախալի
երևոյթի մէջ աչքի եր ընկնում միմիայն կլու-
րի վարչութիւնը, որը, չը նայելով որ մասնակ-
ցողների մեծամասնութիւնը կլուրի անդամներ
էին, ներկայացման երկու գործողութիւնը չան-
ցած՝ պահանջեց վարձը, սպառնալով զարգացնել
ներկայացումը և ցանկանում էր խել մերժե-
րի ձեռքից «ստիպան» կոչված դահլիճը, որ-
տեղ հաջուկում էին կանայք, և ուղարկել մի
ցուրտ սենեակի, որտեղ անկարելի էր տաք հո-
գուստով նոյն իսկ կանգնել:

Ներկայացումը տուեց չը տեսնված արդիւնք.
այն է՝ տոմսակներից ստացվեց՝ 320 ռ. 85 կ.,
նուէրներ և աւելացրած ախոռներից 56 ռ. 90 կ.,
պրօգրամմաների վաճառումից 5 ռ. 40 կօպ.,
ընդամենը՝ մուտք եղաւ 383 ռ. 15 կօպէկ:
Երևան եղաւ՝ կլուրի դահլիճին վարձ 30 ռ.,
լուսաւորութեան և ծառաներին 15 ռ. 50 կօպ.,
ախոռների վարձ և շէնքարհներին 9 ռ., պարկե-
մակներին 6 ռ., աֆիշաների և պրօգրամմաների
ստղագրութեան 6 ռ. 80 կ., հագուստի վարձ
5 ռ. և մանր ծախս 18 ռ. 60 կ.: Գումարը 90
ռ. 90 կ., որը դուրս գալով մուտքից՝ դուռ ար-
դիւնք մնաց յօգուտ ընկերութեան 282 ռ. 16
կօպ., որը յանձնած եմ վարչութեանը և ծախս-
վում է գաղթականների վրա: Պարտականութիւն
եմ յայտնում վարչութեան կողմից յայտնել
հրապարակով շարահալակութիւն ակի. Զ. Սահա-
կեանին, օրերդներ 0. Տէր-Սահակեանին և Ս.
Մէլքե-Քիմիւրեանին և պարոններ Մ. Սահա-
կեանին, Ա. Ազաւեանին, Ա. Արշակունուն, Կ.
Տէր-Մկրտչեանին, Վ. Մկրտչեանին, Գ. Խաչա-
կեանին, Ռ. Օսանջանեանին, Տ. Տէր-Արթաշա-
մեանին, Ա. և Վ. Տէր-Խաչատրեաններին, որոնք
մասնակցեցին ներկայացմանը, պարոններ Տ.
Աֆրիկեանին և տիկ. Ռ. Ղազարեանին, որոնք
նուիրել են ներկայացմանը 24 ռ. 40 կ. և կօ-
զակներ կ'օգտավան գնդի գնդապետ Պ. Դար-
կինին, որ կօզակների զինուորական երաժշտու-
թիւնը ձրի վիշեց ներկայացման համար:

Անգամ վարչութեան՝ Ս. Տէր-Մարտիրոսեանց

Типографія Канцел. Главнанач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 43.